

Գրիգոր Զօհրապի Նամակը, Ուղղուած՝ Ներքին գործոց Նախարարին

Զօհրապի թողուններում պահպանուած է ուշագրաւ մի վաւերագիր՝ Թալէաթին ուղղուած նրա նամակի տաճկերէն ընդօրինակութիւնը (Ա, Թ. 47): Նամակն անթուակիր է, բայց ակներէ է, որ գրուած է Գոնիայում, Դիարբէքի ուղարկուելու լուրն իմանալուց յետոյ: Ահա նրա թարգմանութիւնը (հրապարկուած է առաջին անգամ).

<Գոնիա, Մայիսի 27/9 Յունիսի, 1915 >

Նորին մեծութիւն ներքին գործոց նախարարին

Յատուկ հարցաքննութեան համար ինձ ուղարկուած են Դիարբէքի: Յօդուածի ի՞նչ լինելը չգիտեմ: Ըստ տարածուած լուրերի, իբր կառավարութեան հանդէպ հակագործունէութիւն եւ անբարեացակամութիւն եմ ցոյց տուել: Այս մեղադրանքը բոլորովին չեմ ընդունում:

Եթէ անհրաժեշտ է որեւէ գործի քննութիւն, այն լրիւ ու արդարացի վարելու համար հարկ է, որ քննուողը տեղեակ լինի լրիւ ընթացքին: Ես ոչ մի խմբաւորման ու կուսակցութեան չեմ պատկանել: Երեսփոխանական ժողովում պետութեանը ծառայելուց բացի այլ գործունէութիւն չեմ ունեցել:

Պատերազմը յայտարարուելուց ի վեր միշտ պետութեան հանդէպ հաւատարմութիւն, գործօն հաւատարմութիւն եմ ցուցաբերել: Ստորեւ մատնանշում եմ կատարած ծառայութեան հետ կապուած վայրերը, ժամանակն ու վկաները: Աղաչում եմ նկատի առնել, որ անկարելի է վկաներին Ստամբուլից բացի որեւէ այլ տեղում քննել, եւ այդ քննութիւնը պէտք է կատարուի Ստամբուլի ոստիկանութեան կողմից ու յայտնուի Դիարբէքի: Կասկածի տակ գտնուող անձի քննութիւնը յանձնարարուած է տուեալ անձի բնակավայրի ոստիկանութեանը. այն Դիարբէքիում անցկացնելը առանձնապէս տեղին չէ:

Հաստատ համոզուած լինելով անմեղութեանս մէջ, խնդրանքիս համաձայն գործիս քննութիւնը անհրաժեշտ է յանուն արդարութեան:

Առաջին. Պատերազմը յայտարարուելուց անմիջապէս յետոյ պետութեանը՝ հայերի հաւատարմութեամբ ու պատուով ծառայելը ապահովելու համար երեսփոխաններին յատուկ հրահանգներ ուղարկելու նպատակով քանիցս դիմել եմ Չաւեն Պատրիարքին եւ դոկտ. Դաւիթեանին: Յիշեալ կարգադրութիւնները եւ հրահանգները ուղարկել եմ տուել: Վկաներս են՝

1. Չաւեն Պատրիարք Էֆէնդին,
2. դոկտ. Դաւիթեանը,
3. Բ. Դոան վերակացու Գամեր Էֆէնդին:

Երկրորդ. Ստամբուլի հայութեան կողմից մեր պետութեանը նիւթական ծառայութիւն մատուցելու նկատառումով, մօտաւորապէս 50 մահճակալով մի հիւանդանոցի կարիքները հայթայթելու համար անհրաժեշտ միջոցներ եմ ձեռնարկել: Յիշեալ հիւանդանոցի կարիքների համար պահանջուած գումարը ձեռք բերելով, ինձ յաջողուել է այն յանձնել պետութեանը: Վկաներս են՝

1. Առեւտրական բանկի խորհրդից Արսէն Արսէնեանը.
2. բանկիր Եղուարդ Գարակէօզեանը.
3. վաճառական Յակոբ Եսայեանը.

4. Արշակ էֆենդին (Զօհրապի քարտուղար Արշակ Պախթիարեանը - Ա. Շ.).

5. գործարանատեր Լեւոն Տնդկլեանը:

Երրորդ. Մեր բանակի վիրաւորներին եւ հիւանդներին բժշկական օգնութիւն ցոյց տալու համար Բերայում, Ստամբուլում եւ Իսկիւտարում հայ բժիշկների միջոցով հայ կանանց եւ օրիորդների բժշկական դասընթացքներ հիմնելու նպատակով թելադրութիւններս Ջաւէն Պատրիարք էֆենդիին ու դոկտ. Դաւիթեանին յայտնել եմ գրաւոր: Իմ ջանքերով այս դասընթացներում պատրաստուել են մօտ 100 օրիորդներ, հիւանդապահութիւն են սովորել, աւարտել եւ մինչեւ այժմ էլ ծառայում են: Այս ձեռնարկումիս մասին յայտնել եմ նաեւ բժիշկ Սիւլէյման Մուխան փաշային: Վկաներս են՝ 1-Ջաւէն Պատրիարք էֆենդիին. 2. դոկտ Դաւիթեանը. 3. բ-ժիշկ Սիւլէյման Մուխան փաշան:

Չորրորդ. Անատոլուի մէջ որոշ հայերի՝ իրենց զինուորական ծառայութիւններում թերանալու, խռովութիւններ սերմանելու եւ տէրութեան հանդէպ դաւադրութիւններ կազմակերպելու մասին տարածուած լուրերը լսել եմ Ստամբուլում, Պատրիարք էֆենդիից: Անմիջապէս նրան դիմելով յայտնեցի, որ երեսփոխանների ու Պատրիարքարանի ներկայացուցիչների մեծ ժողով գումարուի եւ մի քանի հայ ընտանիք հեռացուելով՝ ապահովուի պետութեան հանդէպ ընդհանուրի հաւատարմութիւնը: Ինչ օգտակար ձեռնարկում որ հնարաւոր է՝ գործնականօրէն պէտք է կատարել: Միջոցների մասին մտածելու անհրաժեշտութիւնը ես եմ յայտնել թէ՛ Պատրիարք էֆենդիին, թէ՛ (2ա. անձնանուն): Ստամբուլում կատարուած ձերբակալութիւններից 4 օր առաջ Ղալաթիոյ եկեղեցում (1 ա.) գումարուած ժողովում, այս հանգամանքները իմ կողմից բացատրուելուց յետոյ միաձայն որոշում ընդունուեց եւ այս առթիւ յիշատակագրի կազմումը ինձ յանձնարարուեց: Այդ ժողովում Շապին Գարահիսարի պատուիրակի՝ Կայսերական կառավարութեան հրամանին հակառակուելու եւ հարցը նոյն ձեւով թողնելու համար նոյնիսկ խստօրէն յանդիմանել եմ Պատրիարքարանի ժողովին:

Կիրակի օրը տեղի ունեցան ձերբակալութիւններ: Գրի առած յիշատակագիրս ուղարկել էի Պատրիարք էֆենդիին: Նա մի շարք փոփոխութիւններ մտցնելով ձերբակալութիւններին վերաբերող խնդիրներում, յիշատակագիր ներկայացրեց Կայսերական կառավարութեանը: Ես միացայ Պատրիարքի խնդրանքին ու պնդումներին: Կայսերական կառավարութեան հրամանը, ինչպիսին էլ լինի, հայերը պարտաւոր են կատարել: Ես դա յայտնեցի մեծ եպարքոս էֆենդիին եւ նորին մեծութիւն ներքին գործոց նախարարին: Վկաներս են՝

1. Տիւպեր էֆենդիին.

2. (1 ա. անձ.).

3. (1 ա. անձ.).

4. Ջաւէն Պատրիարք էֆենդիին.

5. նախկին Պատրիարք Դուրեան էֆենդիին.

6. Պատրիարքական ժողովի անդամ, Բ. դռան վերակացու Գամեր էֆենդիին:

Հինգերորդ. Միեւնոյն ժամանակ իթթիհատական կուսակցութեանը խիստ համամիտ մի անձնաւորութեան՝ անտառային վարչութեան տնօրէն Էքշեան էֆենդիի հետ ունեցել եմ 3-4 տեսակցութիւն հայերի՝ խաբկանքներին չենթարկուելու, ինչպէս նաեւ խռովութիւնների տարածումն արգելելու ու կառավարութեան խորհուրդներով շարժուելու նկատառումներով: Օգտակար համարելով յատուկ յանձնաժողովների ուղարկումը Անատոլու, այս մտադրութիւններս յայտնել եմ Պատրիարք էֆենդիին: Վկաներս են՝

1. Էքշեան էֆենդիին.

2. Պատրիարք էֆենդիին.

3. Բ. Դռան վերակազմի Գամեր էֆեկտին:

Վեցերորդ. Անգամ ձերբակալութեան օրը, Զորեքշաբթի, մի քանի հայերի թշնամական շարժումները կասեցնելու եւ կառավարութեան հրամանը, ինչպիսին էլ որ այն լինի, ուրախութեամբ կատարելու ու մեր հանդէպ կասկածները վերացնելու համար Հալաճեան, Տիլպեր, Ոսկան էֆեկտիների հետ Փոքր ակումբում անց ենք կացրել խորհրդակցութիւններ եւ այդ հարցերի կապակցութեամբ մի քանի անգամ հանդիպումներ ենք ունեցել: Վկաներս են՝ Հալաճեան, Տիլպեր եւ Ոսկան էֆեկտիները:

Եօթներորդ. Տեղեկանալով ռազմական մի շարք պիտոյքների՝ Ռումինիայում անցկացնելու դժուարութիւններին, ինչոր չափով օգտակար լինելու մտահոգութեամբ, տղայիս (Լեւոն-Վահան Զօհրապը - Ա. Շ.) ուղարկեցի Բուխարէստ եւ ինձ յաջողուեց դրանց որոշ մասը փոխանցել զինուորականութեանը: Վկաներս են՝

1. Թալէաթ բէյ.
2. Էլեւմտական գործերի խորհրդական Թահսին բէյ եւ
3. (1 ա. անձ.):

Վերը թուարկած եօթ պարագաները մանրամասն քննելուց յետոյ, խնդրում եմ ստացուած արդիւնքների մասին յայտնել Դիարբէքիի կենտրոնին եւ ցուցաբերել արդարութիւն ու ճշմարտութիւն:

<Գ. ԶՕՀԸԱՊ>

Նամակի ոճը պաշտօնական է, ոչ մի ակնարկ իրենց անձնական-մտերմական յարաբերութիւնների մասին: Արդեօք կարծում էր, թէ նախարարը իրազեկ չէր կատարուածին կամ վստահ էր թէ իր փաստարկումները կը ստիպեն վերաքննութիւն կատարել: Աւելի շուտ՝ պարզապէս յուսահատի ճիչ էր, դահճին ողորբելու հարկադրական մի փորձ: Իսկ թուարկուած փաստերը կէտ առ կէտ համապատասխանում էին իսկութեան: Իրօք, 1914-ի Հոկտեմբեր 20 (Նոյեմբեր 2)-ին Զօհրապը ստեղծուած «տազնապալի կացութիւնը» փոքր-ինչ մեղմելու եւ ազգը աղէտից փրկելու նպատակով Պատրիարքին թելադրել էր մի ծրագիր (Ը, 39), որ ի դէպ ներդաշնակ էր Դաշնակցութեան՝ Կարինում գումարուած Եօթներորդ (1913, Օգոստոս) եւ Ութերորդ (1914, Յուլիս) ընդհանուր ժողովներում ընդունուած որոշումներին՝ պատերազմի անխուսափելիութեան դէպքում «ամէն քաղաքացի կը կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնները իր պետութեան հանդէպ» (Ը, 105, 108): Իրօք, Զօհրապի առաջարկներին ընթացք է տրուել, եւ դրանցից շատերը շուտափոյթ իրագործուել են: Իրօք, անմիջապէս հրաւիրուել է Խառն ժողովի նիստ եւ որոշուել, որ «Պատրիարքը լաւ յարաբերութիւններ մշակել իթթիհատական կուսակցութեան եւ կառավարութեան հետ» (ԺԳ, 74-78): Թալէաթին յղած նամակի չորրորդ կէտում նշուած իրողութիւնները իրօք վերաբերում են 1915-ի Ապրիլ 10/23 նիստին եւ Ապրիլ 13/26-ի այցելութիւններին: Բայց Զօհրապի նամակում կան սեփական ծառայութիւնների ինչ-ինչ գունազարդումներ (ընթերցողը կը համոզուի, եթէ յանձն առնի նամակագրի պնդումները բաղդատել իրեն արդէն ծանօթ վաւերագրերի հետ): Հասկանալի է, սակայն, որ դրանք արուած են վերահաս անխուսափելի իրադարձութիւնների զիտակցման ստիպմունքով:

Ալբերտ Շարուրեան

Գրիգոր Զօհրապի Կեանքի Եւ Գրական Ժառանգութեանց Էջերից. Եղերապատում Օրագրութիւններ

Էջ 4044

Համագգայիի Վահէ Մէթեան Տպարան